

1700-ԱՄՅԱԿ

ՎՐԵԺ ՄԿՐՏԶԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԴՎԻՆԻ 607 ԹՎԱԿԱՆԻ ԺՈՂՈՎԻ ՇՈՒՐՋ

4-րդ դարի վերջերին և 7-րդի սկզբներին մեստորականության ազդեցությունը Հայաստանում և դավանակից Վրաստանում մեծացավ՝ ասպարեզ տալով Կյուրիոնի պառակտիչ քայլերին: Հայաստան մեստորականների թափանցմանը նպաստեց այն հանգամանքը, որ նրանք իրենց բնավայր Միջագետքից դյուրությամբ կարողացան իրենց շոշափուկները տարածել հարևան երկրներում: Դեռևս 6-րդ դարի սկզբներից Մծրիմի մետրոպոլիտն իր ազդեցությանն էր ենթարկել ամզան Բյուզանդիային ենթակա Ասորիքում եղած քրիստոնեական եկեղեցիների զգալի մասին¹:

Սասանյանները տակավին Վրաս Ե Գոռի (420-439) ժամանակներից, կամենալով պառակտել քրիստոնեական աշխարհը, հովանավորում էին մեստորականներին՝ ջանալով նրանց միջոցով խարխլել Բյուզանդիայի և Պարսկաստանի գերիշխանությանը ենթակա քրիստոնյաների միջև հնուց ի վեր հարատևող ավանդական կապերը²: Բայց երբ Սասանյան դուռը համոզվեց, որ մեստորականները համադաշն են Բյուզանդիայի Քաղկեդոնական եկեղեցու հետ, փոխեց իր վերաբերմունքը նրանց հանդեպ: Եվ քանի որ հայերը քաղկեդոնական հավատքը ծագած էին համարում «մեստորականության արմատից»՝ նույնացնելով նրանց, ուստի պայքար ծավալեցին երկուսի դեմ³: Այս հանգամանքը նպաստեց Հայոց եկեղեցու հանդեպ սասանյանների դրական վերաբերմունքին:

Հայաստանի նկատմամբ Բյուզանդիայի վարած քաղաքականությանը հակալքելու, հայերին իր կողմը գրավելու նպատակադրումով Սասանյան Խոսրով Բ Փարվեզ արքան (591-628) սկսեց հովանավորել նրանց՝ թույլ տալով կառուցել նոր եկեղեցիներ, վերականգնել պատերազմի և կրոնական հալածանքների ժամանակ

¹ I. Fley, Les insaisissables nestoriens de Damas ("After Chalcedon". Studies in Theology and Church History. Leuven, 1985, p. 167).

² The Cambridge History of Iran, vol. 3(1). The Seleucid, Parthian and Sasanian Periods, Cambridge, 1983, p. 485-486.

³ Տե՛ս Ե. Տեր-Մինասյան, Պատմա-քանասիրական հետազոտություններ: Երևան, 1971, էջ 369-373:

Հայաստանում ավերված եկեղեցիները: Խոսքովն անձամբ կառուցել տվեց երկու եկեղեցի⁴:

Իրենց դավանական խարդավանքները Հայ եկեղեցու դեմ շարունակեցին մետտրականները⁵: 605 թվականին արանք ժողով գումարեցին⁶ և այդուհետև սկսեցին քարոզչություն ծավալել Հնդկաստանում և Չինաստանում՝ փաստորեն դուրս մղվելով Մերձավոր Արևելքից: Նույն թվականին Պարսից պետության մեջ մեծ ազդեցություն ունեցող միաբնակ Գաբրիել բժշկապետը և քրիստոնյա Օիրին թագուհին կարողացան փակել տալ Նեստորական եկեղեցին՝ մետտրականներին զրկելով կաթողիկոս ընտրելու իրավունքից: Խոսքով Փարվեզը նույնիսկ բանտ մետեց արանց պարագլուխներին: Խոսքով Բ-ի մյուս կինը Բյուզանդիայի կայսեր դուստր Մարիան էր⁷:

Հայաստանի պարսիկ մարզպետը, իր երկրի շահերից ելնելով, դրական վերաբերմունք ուներ Հայոց եկեղեցու և արա Հայրապետի՝ Մովսես Եղվարդեցու (574-604) նկատմամբ⁸: Դրան էապես նպաստեց Վրկանից աշխարհի փառաբանված մարզպան Սմբատ Բագրատունու (Խոսքով Շումի) հոգածու վերաբերմունքը Հայոց եկեղեցու նկատմամբ: Սմբատ Բագրատունու ջանքերով Վրկանում ստեղծվեց Հայոց Առաքելական եկեղեցու առանձին վիճակ, ինչը, բնականաբար, ավելի ընդլայնեց Հայ եկեղեցու իրավասության ոլորտները՝ ի հեճուկս մետտրականության: Սմբատ Բագրատունին վճռական քայլեր ձեռնարկեց դեռևս 360-ական թվականներին գերեվարված և իրենց լեզուն ու գիրը մոռացած Վրկանի հայերի լեզուն, գիրն ու գրականությունը վերականգնելու համար՝ արանց հոգևոր առաջնորդ հաստատելով Աբել Երեցին⁹: Վերջինիս, ըստ Սամվել Անցեու, Սմբատը եպիսկոպոս է ձեռնադրել տալիս Հայոց Կաթողիկոսի կողմից և ճշանակում Վրկանի հայադավան եկեղեցու առաջնորդ¹⁰: Հովհաննես Դրասխանակերտցին ևս հավաստում է, որ Աբելին եպիսկոպոս է կարգել Մովսես Կաթողիկոսը, և Վրկանում հիմնվել է Հայոց եկեղեցու առանձին վիճակ¹¹: Նույնը վկայված է նաև նոր հայտնաբերված մի

⁴ The Noldeke, *Autsätze zur persischen Geschichte*, Leipzig, 1887, S. 124-125, A. Колесников, *Иран в начале VII века*. Ленинград, 1970, с. 71.

⁵ Գիրք թղթոց: Թիֆլիս, 1901, էջ 108-109:

⁶ *Sinodicon orientale*, ed. I. Chabot. Paris, 1902, p. 474.

⁷ *The Cambridge History of Iran*, p. 500.

⁸ Ենթադրվում է, որ քրիստոնյաների հանդեպ խոսքով Փարվեզի վարած քաղաքականության ակտիվացումն սկսվել է 606/7 թ. (Է. Լ. Դանիելյան, Հայ եկեղեցու նկատմամբ խոսքով Փարվեզի վարած քաղաքականությունը, «Պատմա-բանասիրական հանդես», 1981, № 4, էջ 200): Բայց Սասանյան դուռը Հայ եկեղեցու հանդեպ գործում քաղաքականություն էր վարում տակավին 576 թ. հետո: Խոսքով Փարվեզը, սկսած 591 թ., ջանում էր Հայ եկեղեցին գրավել իր կողմը:

⁹ Պատմություն Սեբեոսի, աշխ. Գ. Արզարյանի: Երևան, 1979, ԻԴ, էջ 79:

¹⁰ Սամուելի քահանայի Անցեու Հաաքմունք ի գրոց պատմագրաց, աշխ. Ա. Տեր-Միքելեանի: Վաղարշապատ, 1893, էջ 77:

¹¹ Ծովհաննես Դրասխանակերտցի, Պատմություն Հայոց: Թիֆլիս, 1912, էջ 70:

ուներ պարսիկ մարզպանի նկատմամբ: Սմբատն արքայի կամքի գործադրողն էր Հայաստանում, բայց իր հայրենաշահ գործունեության շնորհիվ Հայաստանում նա ձեռք էր բերել Հայոց թագավորների քաղաքական և հոգևոր ավանդապահի, նրանց գործը շարունակողի համբավ: Ուխտանքը գրում է, որ թեև Սմբատ Բագրատունին Հայոց թագավոր չէր, այնուամենայնիվ լրացնում էր նրա գոյության պակասը¹⁷: Ուստի բնական էր սպասել, որ հայ հոգևորականությունը պետք է անվերապահ վստահություն ցուցաբերեր նրա նկատմամբ և ընդուներ նրա առաջարկները: Օգտվելով նման վերաբերմունքից, Սմբատ Բագրատունին առաջին հերթին հայ եկեղեցականներին ներկայացրեց «Դավանական ձեռնարկը», որն, անշուշտ, կազմվել էր Վրթանես Քերթոզի գործուն մասնակցությամբ: Իբրև դավանության պարտադիր մորմ (հանգանակ), ձեռնարկը տոգորված էր «տղիղ և ճշմարիտ խոստովանությամբ»¹⁸, հայրենավանող հավատքով: Պահը դա էր պահանջում: Ամհրաժեշտ էր հակահարված տալ քաղկեդոնական մոլեզին հորձանքին և պաշտոնապես մերժել այն: Դրան էր կոչված ԴՎԻՆՈՒՄ գումարված այս ժողովը: Սկզբնաղբյուրների վկայությամբ, ժողովը գումարվեց Խոսրով Փարվեզ արքայի գահակալման 17-րդ տարում¹⁹, այսինքն՝ 607 թ.:

Ստեղծված պայմաններում, բնականաբար, ավելի մեծացավ Հայոց եկեղեցու ազգապահպան դերը: Այն առավել ցայտունորեն դրսևորեց իր անկախությունը՝ մարմնավորելով հայ ժողովրդի պետականությունը և նրա դավանական ինքնորոշումը: Եկեղեցու շուրջ համախմբվեցին Հայաստանի հոգևոր և քաղաքական գործուն ուժերը: Դրանում հիմնական մեծ էր Սմբատ Բագրատունու ներդրած ավանդը: Նրա միջամտությամբ էր, որ Սյունիքի Եպիսկոպոսական Աթոռը, որը երկար ժամանակ խզել էր նվիրապետական կապերը ԴՎԻՆԻ Մայր. Աթոռից, վերականգնեց դրանք և ընդունեց Հայոց Կաթողիկոսի գերագահությունը՝ իր հովվապետին առաքելով ԴՎԻՆԻ ժողով²⁰: Հնարավոր է, որ դրանում որոշակի դեր է խաղացել նաև Սյունյաց իշխանը:

Թեև ԴՎԻՆԻ այս ժողովում հանվածն հիշվում են լոկ հոգևորականներ՝ առանց նախարարների մասնակցությունը նշելու, սակայն, Ուխտանքի մոտ պահպանված մի վկայության համաձայն, ժողովը գումարվել է ոչ միայն Սմբատ Բագրատունու հրամանով, այլև «ի սատարելոյ այլոց նախարարացն»²¹: Պատմագիրն, անշուշտ, նկատի ունի հայ նախարարներին, որոնց մասնակցությունը ժողովին տվյալ իրա-

¹⁷ Նույն տեղում, էջ 55:

¹⁸ Նույն տեղում, էջ 54:

¹⁹ Գիրք թղթոց, էջ 151, Ուխտանք, II, Լ, էջ 54: Ուստի ժողովի որոշակի թվականը 607-ն է: Ն. Ակիմյանը մի դեպքում այն դնում է 606 թ. (Ն. Ակիմյան, Կիրիոն Կաթողիկոս Վրաց, Վիեննա, 1910, էջ 152, 153), երբեմն էլ՝ 607 թ. (նույն տեղում, էջ 146 և այլն):

²⁰ Գիրք թղթոց, էջ 146:

²¹ Ուխտանք, II, Լ, էջ 55: Մ. Օրմանյանի կարծիքով, ԴՎԻՆԻ այս ժողովին «նախարարներու ներկայությամբ իշխատակութիւն չկա» (տե՛ս Մ. Օրմանյան, Ազգապատում, Ա, Կ. Պոլիս, 1912, էջ 610): Բայց ժողովին հայ իշխանների մասնակցությունը վկայված է Ուխտանքի մոտ (տե՛ս Ուխտանք, II, Լ, էջ 61): Ժողովի արձարած խնդիրները էապես շահագրգռում էին նաև նախարարական դասին:

վիճակում հույժ անհրաժեշտ էր, քանի որ Դվինի 607 թ. ժողովը պետք է լուծեր ոչ միայն Հայոց Եկեղեցու առջև ծառացած դավաճանական, եկեղեցաբանական խիստ աղմկահարույց խնդիրները, այլև, որ տվյալ պահին հատկապես կարևոր նշանակություն ուներ, քաղաքական այն հիմնահարցերը, որոնք շրջափում էին Հայաստանի ներքին ինքնավարությանը, Հայ Եկեղեցու ինքնակալությանը և երկրի պետական-քաղաքական ոլորտներին առնչվող բազմաթիվ այլ խնդիրներ, որոնց լուծմամբ էր պայմանավորված հայ ժողովրդի քաղաքական կողմնորոշումը: Խիստ արդիական ու հրատապ էր դարձել այն խնդիրը, թե հայերն ում են հարելու՝ քրիստոնյա Բյուզանդիայի՝ «ն, թե» զրադաշտական գործել հարևանին: Բնականաբար, հարցն իր ողջ սրությամբ ծառացած էր մաս այդ երկու հզորագոր խառնամանրի առջև, որոնց համար Հայաստանն ուներ ռազմաքաղաքական առաջնակարգ նշանակություն:

Բյուզանդիայի Քաղկեդոնական Եկեղեցուն հաջողվեց Հայաստանի բյուզանդական հատվածի հայ հոգևորականությանը պահել իր ազդեցության ոլորտում: Այդ կողմերի հայ կղերականները, ինչպես հաղորդում է Ուխտանեսը, «անկեալ էին ի կամաց իրեանց ընդ հարկաւ, և թիրեալ ի հաւատոյն և այլք ի բռնութենէ Հոռոմոց զկնի մոցա խոտորեալ»: Իհարկե, հարում է պատմագիրը, Հայոց Եկեղեցու և անձամբ Սմբատ Բագրատունու անդուլ ու նպատակասլաց ջանքերը նպաստեցին կայսրության դավաճանական շավղի մեջ ներքաշված այդ հոգևորականների վերադարձին Հայաստան²²: Դվինի ժողովում, սակայն, ձգձգվեց Հայոց Կաթողիկոսի ընտրությունը: Եվ միայն Սմբատ Բագրատունու և, հավանաբար, որոշ հայ նախարարների, հոգևորականության վճռական միջամտության շնորհիվ հնարավոր դարձավ հարթել մաս ժողովականների միջև ծագած տարաձայնությունները՝ վերստին վավերացնել տալով Հայ Եկեղեցու դավաճանքը, իհարկե մեկնելով վերջինիս ճշմարտացի էությունը²³:

Դվինի այս ժողովն առաջին երեք տիեզերածոդովների ընդունած հավատքը հաստատեց որպես ուղղափառ դավանություն և մերժեց Քաղկեդոնի 451 թ. ժողովի դավաճական բանաձևը («Լոնի տոմարը»)՝ այն որակելով իբրև սահմանափակ և խորշելի հերձված²⁴: Ընդամին ժողովը որոշեց մաս, որ Հայոց Եկեղեցին պիտի հրաժար կերպով իր գիրկն է ընդունելու բոլոր նրանց, ովքեր կկամենան նախընտրել նրա ուղղադավան հավատքը²⁵: Միաժամանակ մեջ, որ քաղկեդոնափառ այն հայ եկեղեցականները, ովքեր այդ ժողովում, մերժելով երկաթնակությունը, ընդունվեցին Հայ Եկեղեցու գիրկը, պարտավոր են ներկայացնել «հավատի գիր», իմա՝ հատուկ թուղթ՝ իրենց ստորագրությամբ, որտեղ հաստատվելու էր Հայ Առաքելական Եկեղեցուն նրանց հարելու մասին՝ քաղկեդոնականության կտրուկ մերժումով²⁶: Միաժամանակ Սմբատ Բագրատունու հրահանգով Հայ Եկեղեցու հոգևոր

²² Նույն տեղում, էջ 55:

²³ Նույն տեղում, II, ԼԱ, էջ 56-57:

²⁴ Նույն տեղում, II, ԼԲ, էջ 58:

²⁵ Գիրք թղթոց, էջ 147:

²⁶ Ուխտանես, II, ԼԲ, էջ 58, Գիրք թղթոց, էջ 149:

հայրերը կազմեցին հավատի ձեռնարկ, որն իր կնքամատանով հաստատել տվեց կաթողիկոսական տեղապահ Վրթանեսը²⁷ ժամանակի ամենալուսավոր եկեղեցականը:

Հայ եկեղեցին պաշտոնապես անջրպետվեց Քաղկեդոնյան եկեղեցուց՝ մերժելով 451 թ. Քաղկեդոնի ժողովում ընդունված հավատո բանաձևը՝ այն համարելով խոտորում ընդհանուր մախնավանդ դավանությունից: 8-րդ դարի սկզբի հայ-քաղկեդոնական սկզբնաղբյուրի հավաստմամբ, Դվինի այդ ժողովում Հայոց «Արքահամ Կաթողիկոսը Հովհաննեսի բաժնի եպիսկոպոսներին ստիպեց նզովել Քաղկեդոնի ժողովը»²⁸:

Դվինի 607 թ. ժողովի ընդունած որոշումների շնորհիվ հաստատուն հող ստեղծվեց մաս Հայոց մոր կաթողիկոսի ընտրության համար, որը, ամենայն հավանականությամբ, կայացավ ժողովի վերջին միաստում: Հայոց Հայրապետ ընտրվեց Ռշտունյաց եպիսկոպոս Արքահամը, նույն զավառի Աղբաթան գյուղից: Ընտրությունը, ինչպես հավաստում է ինքը՝ Արքահամը, կատարվեց գրեթե միաձայն, և մա հարկադրված եղավ ստանձնել, իր իսկ արտահայտությամբ, այդ «ծանր բեռը՝ հնազանդվելով մեծամասնության կամքին»²⁹: Կաթողիկոսի ընտրությունն անշուշտ կատարվել է Սմբատ Բագրատունու համաձայնությամբ: Այն փաստը, որ կաթողիկոսական տեղապահ Վրթանես Քերթոզը, չնայած իր մեծ հեղինակությանը և Հայոց Հայրապետի գահի միակ արժանի թեկնածուն լինելու հանգամանքին, այնուամենայնիվ չընտրվեց Հայոց Կաթողիկոս, թելադրված էր մաս որոշակի քաղաքական նկատառումներով: Սմբատը գիտեր անշուշտ, որ իր խորհրդական Վրթանես Քերթոզը, իբրև կաթողիկոսական տեղապահ, քաղկեդոնականության դեմ ծավալած իր գործունեությամբ մեծապես խոչընդոտել էր բյուզանդական ազդեցության ընդլայնմանը Հայաստանում՝ նպաստելով Հայ եկեղեցու հանդեպ Սասանյան արքայի դրական դիրքավորմանը, հարուցելով կայսրության քաղաքական և հոգևոր վերնախավի թշնամանքը: Վրթանեսը հայտնի էր իբրև քաղկեդոնական դավանանքի անհաշտ ու հետևողական հակառակորդ: Այդ մասին գիտեին մաս Բյուզանդիայի բարձր ոլորտներում: Հայաստանի բյուզանդական մասում կայսրության գործի հրամանատար Սորմենեսը Վրթանեսին հղած մամակում

²⁷ Ույտանես, II, ԼԴ, էջ 60: Պատմաղբյուրները չեն հաստատում Ս. Կոզյանի կարծիքը Դվինում, բացի 607 թ. ժողովից, մաս 606 թ. ժողով գումարելու մասին (Ս. Կոզեան, Հայոց եկեղեցին, Բյուրյոթ, 1961, էջ 217):

²⁸ St'ra G. Garitte, *La Narratio de rebus Armeniac, edition critique et commentaire. Corpus scriptorum Christianorum orientalium*, vol. 132 (t. 4), Louvain, 1952, p. 42. St'ra մաս Հր. Բարթիկյան, «Narratio de rebus Armeniac» հունարեն թարգմանությամբ մեզ հասած մի հայ-քաղկեդոնական սկզբնաղբյուր («Բանքեր մատենադարանի», № 6, 1962, էջ 467):

²⁹ Գիրք թղթոց, էջ 163: Մի հեղինակավոր կարծիք համաձայն, Արքահամը կաթողիկոս է ընտրվել տեղապահի իրավագործությամբ՝ կաթողիկոսությունը երեք տարի (604-607) վարած Վրթանես Քերթոզի վախճանվելուց հետո (Ե. Տեր-Մինասեան, Հայոց եկեղեցու յարաբերությունները Ասորոց եկեղեցիների հետ: Էջմիածին, 1908, էջ 138): Սակայն Դվինի 607 թ. ժողովին (որտեղ, ինչպես տեսանք, Արքահամը ընտրվեց կաթողիկոս) մասնակցում էր մաս Վրթանես Քերթոզը (տե՛ս Ույտանես, II ԼԵ, էջ 61):

նրան մեղադրում էր հակաքաղկեդոնական ձեռնարկումների համար, նույնիսկ անվանում էր «Նեոին առաջնորդող», որը Հայաստանում կործանեց քաղկեդոնականների հաստատած սեղանները՝ նրանց համարելով պիղծ և վերստին մկրտել տալով նրանց, քահանաներին հարկադրեց ճգովել «Քաղկեդոնի ժողովը: Այս մատակարարում է հույն գործակալը, «հարկ եղև ծանուցանել մեր բարեպաշտ և խաղաղական տերանց»³⁰ (ըստ երևույթին մկատի ունի Փոկաս կայսրին և Կ. Պոլսի հույն Պատրիարքին):

Պատասխան ամսակում Վրթանեսը հերքեց գործակալին և մշեց, որ հայերը հավատարիմ են մնում «հաւատոյ հարցն և ճշմարիտ վարդապետացն մերոց», «գերից ականակիտ և անթերի ժողովոցն»: Նա նաև դատաւարտեց քաղկեդոնականներին՝ իբրև ճշմարիտ ուղուց շեղված հերձվածողների, որոնք պաճուճված են «նաճիր և սնուտի պատրամաւր»: Ապա, շարունակում է Վրթանեսը, «պարտ է ձեզ գձերոյին աշխարհոյ լալ ամմխիթար սգով. թախծանաւր, զի ճեղքեալ էք և աղմկեալք անթիւ աղանդոց զանազանութեամբ»: Եվ երբ մեկը «իւրում տան վերակացութիւն առնել չգիտիցէ կամ չզարիցէ, զիսրոյ ի վեհագունից հրապարակախաւս համարձակեալ հրաման տայցէ»³¹:

Այսպիսի մթնոլորտում հայ հոգևոր դասն ու նախարարները Վրթանեսին չէին առաջադրի Հայոց Կաթողիկոսի պաշտոնի համար, որպեսզի չսրեն հարաբերությունները Հայաստանի բյուզանդական հատվածի իշխանությունների հետ և տեղիք չտան Հայաստանի երկու մասերի դավանական անջրպետման ու հոգևոր դասի հատվածական տարաբնույթ տրամադրություններին: Վրթանեսի կաթողիկոս չընտրվելու գործակոր պատճառ էր, անշուշտ, նաև նրա տարիքը: Նկատենք, որ Դվինի ժողովի գումարման տարում նա կմքեց իր մահկանացուն:

Վրթանեսի և Սորմենեսի միջև ծագած հիշյալ բանակովից հետո հնարավոր դարձավ պահպանել Հայաստանի երկու հատվածների Եկեղեցիների միասնությունը, և նորընտիր Հայոց Կաթողիկոսի աթոռակիցներ ընտրվեցին նաև Հայաստանի բյուզանդական մասի որոշ հայ հոգևորականներ, որոնք դատաւարտեցին ուխտագանց կյուրիոնի պառակտիչ քայլերը: Այդ հոգևորականները, ինչպես հավաստում է Ուխտանես պատմիչը, «խորհեցան տալ ձեռնարկ Աբրահամու Հայոց Կաթողիկոսի և այն լիներ ի միաբանութենէ Հայոց»³²:

Հայաստանի Եկեղեցին այդպիսով ավելի՝ ամրապնդեց իր դիրքերը, դավանական ինքնությունը, որը դրսևորվեց նաև 591 թ. հետո քաղկեդոնականության ազդեցության ոլորտի մեջ ներքաշված հայկական գավառներում: Դրա շնորհիվ դավանական սահմանազատող գործոնը ձեռք բերեց նաև քաղաքական հրատապ մշակակություն: Հայոց Կաթողիկոսի ընտրությամբ Հովհանն փաստորեն զրկվեց Հայաստանում ունեցած եկեղեցական իշխանությունից, դադարեց կաթողիկոսի զահաթոռի համար մղվող պայքարը և, բնականաբար, վերացավ Հայոց Եկեղեցու պառակտման դույզն իսկ հնարավորությունը: Ստեղծված պայմաններում Հովհանն

³⁰ Գիրք թղթոց, էջ 91:

³¹ Տե՛ս նույն տեղում, էջ 95-97:

³² Ուխտանես, II, I, 2, էջ 63:

այլևս արժեք չունեւ Բյուզանդական կայսերականացված Եկեղեցու համար, քանի որ ի գործու չեղավ Հայաստանում կենսագործել նրա դավանական և քաղաքական ծրագրերը:

ԴՎԻՆԻ ժողովում ընդունված որոշումների իրագործումը դրականապես ազդեց մաս Հայոց Եկեղեցու, մախարարների և Սասանյան պետության միջև առկա հարաբերությունների վրա: Պարսից արքունիքը շարունակեց սիրաշահել Հայ Առաքելական Եկեղեցուն: Այս մասին ուշագրավ վկայություն կա Սեբեոսի մոտ: Պատմագիրը գրում է, որ Սմբատ Բագրատունին կարողացավ պարսից խոսքով Փարվեզ արքայից թույլտվություն կորզել՝ ԴՎԻՆԻ Ս. Գրիգոր եկեղեցին կառուցելու համար (այն հիդեհվել էր 571 թ. Հայոց ապստամբության ժամանակ): Սմբատը վերստին կառուցել տվեց եկեղեցին, այս անգամ՝ քարերով (մախկինը փայտաշեն էր): Հայաստանի պարսիկ մարզպանը, սակայն, ելնելով պաշտպանական նկատառումներից, կտրուկ կերպով դեմ կանգնեց այդ ձեռնարկմանը և արքայի առջև ամբաստանեց Սմբատին՝ եկեղեցի կառուցելու համար՝ մշելով, որ «կարի մերձ է առ բերդն, եւ վնասակար է ի թշնամոյ»: Այդուհանդերձ, խոսքով թագավորը չփոխեց իր վճիռը՝ անշուշտ հաշվի առնելով ոչ միայն Սմբատի մատուցած ծառայությունները, այլև, որ ավելի կարևոր էր, Հայոց Եկեղեցին հակաքաղկեդոնական հզոր ուժի վերածվելու հանգամանքը: Փաստորեն ԴՎԻՆԻ այդ եկեղեցու շինությունն սկսվեց Հայաստանի մարզպանի կամքին հակառակ³³:

ԴՎԻՆԻ 607 թվականի ժողովը ամրակայեց մաս Հայոց Եկեղեցու մկիրապետական ինքնակալությունը, ի հեճուկս Քաղկեդոնական Եկեղեցու: Վերջինս փորձում էր ժխտել մաս Հայ Եկեղեցու մկիրապետական ինքնուրույնությունը՝ հենվելով այն փաստի վրա, որ Բյուզանդական Եկեղեցին ուներ հոգևոր պաշտոնյաների ինն աստիճան, մինչդեռ Հայոց Եկեղեցում, Արևելքի քրիստոնեական մյուս Եկեղեցիների պես, դրանց թիվը չէր անցնում չորսից (քահանա, սարկավագ, դպիր, ընթերցող): Ընդամենը, Հայ Եկեղեցում եպիսկոպոսությունը միաստիճան էր, այն դեպքում, երբ Բյուզանդական Եկեղեցում այն ուներ քառաստիճան բաժանում (եպիսկոպոս, մետրոպոլիտ, արքեպիսկոպոս և պատրիարք): Բյուզանդական կղերը երկրորդական մշակակություն ունեցող այս փաստը դարձրեց եկեղեցաբանական պայքարի թիրախ և ժխտեց Հայոց Եկեղեցու մախնական լինելու հանգամանքը՝ նրան համարելով ոչ կատարյալ հոգևոր հաստատություն³⁴: Ըստ այդմ Հայ Եկեղեցու առաջնորդը պետք է կոչվեր ոչ թե կաթողիկոս, այլ մետրոպոլիտ, որը ոչ մի պարագայում չպետք է համագոր լիներ պատրիարքին: Քաղկեդոնական Եկեղեցին այս կերպ ջանում էր մկիրապետորեն իրեն ստորադասել Հայ Եկեղեցին, նրան ենթարկել իր գերիշխանությանը: Սա բացահայտ մարտահրավեր էր Հայոց Եկեղեցուն և սպառնում էր նրա առաքելական հիմնավորից հիմքերին, ուստի հարկ եղավ դիմել կանխող միջոցների՝ ի դերև հանելու քաղկեդոնական կղերի միտումը, որի նպա-

³³ Սեբեոս, ԻԷ, էջ 100:

³⁴ Ույստանէս, II, 49, էջ 119:

